2008 թվականի հունվար ամսվա ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի հունվար ամսվա եկամուտները կազմել են ավելի քան 47.4 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 32.2 մլրդ դրամ, որոնք ապահովել են ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային ծրագրի համապատասխանաբար 31.9 եւ 18.6 տոկոսը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 6.5%-ով, ծախսերի գծով՝ 4.3%-ով:

Նախորդ տարվա հունվար ամսվա համեմատ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 13.1%-ով կամ շուրջ 5.5 մլրդ դրամով[2]: Ընդ որում, 9.1 մլրդ դրամով ավելացել են հարկերը եւ տուրքերը, 685 մլն դրամով՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 4.5 մլն դրամով՝ պաշտոնական դրամաշնորհները, իսկ այլ եկամուտները (նախկինում՝ ոչ հարկային եկամուտներ) նվազել են շուրջ 4.3 մլրդ դրամով: Արդյունքում՝ եկամուտների կազմում 10.8 տոկոսային կետով աճել է հարկերի եւ տուրքերի տեսակարար կշիռը եւ նույնքան նվազել այլ եկամուտների տեսակարար կշիռը: Մասնավորապես, պետական բյուջեի ընդհանուր եկամուտների 79.7%-ը ձեւավորվել է հարկային մուտքերի հաշվին, պետական տուրքը կազմել է բյուջեի եկամուտների 3.1%-ը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 13.1%-ը, այլ եկամուտները՝ 4.1%-ը: «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 851 մլն դրամ՝ նախորդ տարվա 434.8 մլն դրամի դիմաց:

2008 թվականի հունվար ամսին պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 37.8 մլրդ դրամ եւ 32%-ով ապահովել եռամսյակային ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 30.1%-ով կամ 8.7 մլրդ դրամով[3]:

---

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում եւ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

[2] 2008 թվականից ՀՀ պետական բյուջեն կազմվել է «Պետական ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի դասակարգմանը համապատասխան, նաեւ պետական բյուջեում ներառվել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, ուստի նախորդ տարվա հետ համեմատություններում հաշվի են առնվել նշված փոփոխությունները:

[3] 2008 թվականի հարկային եկամուտներում ներառվել են հանքարդյունահանման լիցենզառուների եւ հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվող ռոյալթին եւ կոնցեսիոն վճարները, որոնք նախկինում հաշվառվում էին որպես ոչ հարկային եկամուտներ, հետեւաբար 2007 եւ 2008 թվականների ցուցանիշների համադրելիության նպատակով 2007 թվականի ցուցանիշներում նույնպես կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Ավելացված արժեքի հարկը կազմել է 20.8 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 55.1%-ը: Նշված գումարից 12.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 8.4 մլրդ դրամը՝ ապրանքների եւ ծառայությունների ներքին շրջանառությունից: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 30.2%-ով կամ 4.8 մլրդ դրամով: Ընդ որում, ավելացել են եւ՛ ներմուծումից, եւ՛ ներքին շրջանառությունից ստացվող հարկի գումարները:

Պետական բյուջեի հարկային եկամուտների 8.7%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 3.3 մլրդ դրամ: Մասնավորապես, հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 2.4 մլրդ դրամ, որից 1.2 դրամը՝ բենզինի եւ դիզելային վառելիքի, 785 մլն դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 888.3 մլն դրամ, որից 522.2 մլն դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա հունվար ամսվա համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 49.2%-ով կամ 1.1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բենզինի ներմուծումից վճարված հարկերի, ինչպես նաեւ տեղական արտադրության եւ ներմուծվող ծխախոտի գծով մուտքերի աճով:

Հունվար ամսվա պետական բյուջեի հարկային եկամուտների 11.7%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 4.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 26.4%-ով կամ 924 մլն դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների վճարումների, ինչպես նաեւ նվազագույն շահութահարկի վճարման պահանջից ելնելով՝ մեկ տոկոս դրույքաչափով վճարված շահութահարկի աճով:

2008 թվականի հունվար ամսին ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամտահարկը կազմել է շուրջ 2.7 մլրդ դրամ, որը 24.4%-ով կամ 526 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա հունվար ամսվա ցուցանիշը: Աճի հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատանքային եւ քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները:

Հաշվետու ժամանակահատվածում աճ է արձանագրվել նաեւ մաքսատուրքի գծով: Վերջինիս մուտքերը կազմել են շուրջ 2 մլրդ դրամ՝ 29%-ով կամ 441.5 մլն դրամով գերազանցելով 2007 թվականի հունվար ամսվա ցուցանիշը:

Գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ՝ 4.5%-ով կամ 56.1 մլն դրամով գերազանցելով 2007 թվականի համապատասխան ցուցանիշը: Այն հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների գազալցման, առեւտրի իրականացման վայր

կազմակերպելու, հանրային սննդի ոլորտների, խաղատների գործունեության համար գանձված գումարների աճով:

2008 թվականի հունվար ամսվա ընթացքում պարզեցված հարկից պետական բյուջեի մուտքերը կազմել են 859 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն ավելացել է 2.1%-ով կամ 17.6 մլն դրամով:

2008 թվականի հաշվետու ամսվա ընթացքում բնօգտագործման եւ բնապահպանական վճարները կազմել են 829.8 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն ավելացել է 2.8 անգամ կամ 537.5 մլն դրամով՝ պայմանավորված ավտոտրանսպորտից արտանետվող վնասակար նյութերի համար գանձված վճարների ավելացմամբ:

2008 թվականի հունվար ամսվա ընթացքում այլ հարկերից պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 1.6 մլրդ դրամ: Մասնավորապես, 1.3 մլրդ դրամ են կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին եւ կոնցեսիոն վճարները, 164.1 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 105.9 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 44 մլն դրամ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտման համար սահմանված տուգանքները եւ 35.9 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերն ավելացել են 24.4%-ով կամ 320.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներով:

Պետական տուրքի գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ եւ 31.3%-ով ապահովել եռամսյակային ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական տուրքն աճել է 30.4%-ով կամ 340.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների լիցենզավորման, օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի, ինչպես նաեւ դատարան տրվող հայցադիմումների եւ գանգատների համար գանձվող տուրքերի աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 6.2 մլրդ դրամ եւ 27.9%-ով ապահովել եռամսյակային ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 12.4%-ով կամ 685 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել են 6.1 մլն դրամի պաշտոնական դրամաշնորհներ, որոնք մուտքագրվել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2008 թվականի հունվար ամսին կազմել են շուրջ 2 մլրդ դրամ եւ 51.5%-ով ապահովել եռամսյակային ծրագրային ցուցանիշը: Բարձր կատարողականը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերով՝ նախատեսված 70 մլն դրամի դիմաց ստացվել է 500.1 մլն դրամ: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 68.6%-ով: Վերջինս պայմանավորված է 2007 թվականին «Արմենտել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնությամբ վճարված գումարով, որը կազմել էր 4.6 մլրդ դրամ: Առանց նշված գումարի 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտների աճը կազմում է 20.9%, որը հիմնականում պայմանավորված է իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի (50.8%), պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից (54.2%), ինչպես նաեւ օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների (45.7%) գծով կատարված վճարումների աճով:

2008 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 32.2 մլրդ դրամի ծախսեր: Մասնավորապես, 33.1մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, -886.6 մլն դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները:

Անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի ծախսերն ավելացել են 70.3%-ով կամ 13.3 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով, որը կազմել է 60.5% կամ 12.5 մլրդ դրամ:

Ընթացիկ ծախսերի եռամսյակային ծրագիրը կատարվել է 22.3%-ով: Ընթացիկ ծախսերից 1.7 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը: 36.7 մլն դրամ է տրամադրվել պարտադիր սոցիալական ապահովության վճարներին: Ծառայությունների եւ ապրանքների ձեռք բերմանը պետական բյուջեից հատկացվել է 987.6 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում 1.4 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը: Մասնավորապես, 1.26 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, 141.4 մլն դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2007 թվականի հունվարի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 2.9 անգամ: Պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարը կազմել է 845.9 մլն դրամ, որը 2.1 անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը: 2008 թվականի հունվար ամսին պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 16.4%-ը կամ 5.4 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները, որից 1.7 մլրդ դրամը տրամադրվել է համայնքների բյուջեներին

համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը: 2007 թվականի հունվարի համեմատ դոտացիաներն ավելացել են 49.1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի 51.2%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին եւ կենսաթոշակներին, որոնք կազմել են 16.5 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 32%-ը: Մասնավորապես, 13.1 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 3.4 մլրդ դրամ հատկացվել է նպաստներին: 2007 թվականի հունվարի համեմատ կենսաթոշակներն աճել են 85.9%-ով, իսկ նպաստները՝ 37.1%-ով:

2008 թվականի հունվար ամսին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են -886.6 մլն դրամ, որից 1.7 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը եւ 2.6 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը: 2007 թվականի հունվարի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 24.5%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը՝ 34.7%-ով:

2008 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջեն (առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող վարկային ծրագրերի գծով միջոցների ներհոսքի) կատարվել է 15.2 մլրդ դրամ հավելուրդով: Ընդ որում, ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -12.9 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրները՝ -2.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա հունվարի համեմատ պետական բյուջեի հավելուրդը նվազել է 34%-ով, ընդ որում՝ ներքին աղբյուրներից ձեւավորված հավելուրդը նվազել է 39.7%-ով, արտաքին աղբյուրներից՝ ավելացել 44.7%-ով:

Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրներում -4.2 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից (արժեթղթերից) զուտ մուտքերը: Շուրջ 8.7 մլրդ դրամով ավելացել են ազատ բյուջետային միջոցները:

2008 թվականի հունվար ամսին ՀՀ պետական բյուջեից վարկավորումը կազմել է 1.8 մլրդ դրամ, որը տրամադրվել է ԼՂՀ-ին: Այն 25.4%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Արտաքին պարտավորությունների մարմանը հաշվետու ժամանակահատվածում ուղղվել է 474.8 մլն դրամ, որը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը:

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության

լրատվական ծառայություն